Հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային
կենտրոնի տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաշվետվություն

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ
2018 թ.

2018 թ. ընթացքում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի կողմից համաձայն ԳԿՄԿ բարելավման պլանի և ՈԱ բաժնի տարեկան աշխատանքային պլանի, իրականացվել են հետևյալ գործառույթները.

1. **ՈԱ կառույցների աշխատակիցների և պատասխանատուների վերապատրաստումների կազմակերպում: Նախատեսված էր երկու վերապատրաստում**

1.1 **ա/ «Որակի ապահովման ներբուհական համակարգի զարգացումը»** թմայով (32 ժամ, 1 կրեդիտ աշխատածավալ), **որի շրջանակներում** ԳԿՄԿ որակի ապահովման պատասխանատուների և ստորաբաժանումների ղեկավարների համար կազմակերպվել է վերապատրաստում /վերապատրաստող՝ ՈԱԱԿ շահակիցների հետ կապերի բաժնի պետ Լ.Զաքարյան/: Վերապատրաստվել են թվով 25 մասնագետներ:

1.2 **Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ օտար լեզուներից:**

ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի կողմից իրականացվել է նախնական կարիքի գնահատում, արդյունքները հանձնվել են օտար լեզուների ամբիոնին, որտեղ, ըստ լեզվին տիրապետելու մակարդակների, առանձնացվել են 4 խմբեր և իրականացվել է երեքամսյա վերապատրաստում: Նախագծի ավարտին ՈԱ բաժնի կողմից իրականացվել է գնահատում, արդյունքները տրամադրվել են ամբիոնին:

2. Իրավախորհրդատուի հետ քննարկվել և մշակել են կառավարման էթիկայի նորմերը: Իրավախորհրդատուի հետ մշակվել և քննարկման է դրվել Ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված ուսանողական հարցման ընթացակարգը:

3. Տնօրինության կազմում կազմակերպվել են քննարկումներ՝ ԳԱՑ-երի մշակման վերաբերյալ, մշակվել են ԳԱՑ-եր ԳԿՄԿ գործունեությունը գնահատելու համար, ապա իրականացվել է պիլոտային վերլուծություն սահմանված ԳԱՑ-երով:

4. Շարունակվել է նախորդ տարիների փորձը՝ ***Շրջանավարտների կողմից ԳԿՄԿ իրականացվող կրթական ծրագրերի գնահատումը ինչպես առկա, այնպես էլ հեռակա բաժիններում:***

5. Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են նաև ԳԿՄԿ մագիստրանտների՝ կիսամյակային դասընթացներից գոհունակության հարցումներ, մասնավորապես՝ **հեռակա ուսուցման** 18 խմբերի և **առկա ուսուցման** 24 խմբերի առաջին և երկրորդ կուրսերում:

Հարցումների արդյունքները վերլուծվել են Որակի ապահովման բաժնի կողմից, ներկայացվել տնօրինության նիստին և ուղարկվել համապատասխան մասնագիտական ամբիոնները՝ պարտադիր քննարկման:

Ընթացիկ տարում կատարվել են նաև որոշակի բարելավումներ հարցումների գործող կարգերում: Կրթական ծրագրերից շրջանավարտների գոհունակության ամենամյա և կրթական ծրագրերից ուսանողների կիսամյակային հարցման ընթացակարգում որոշակի կետերի ավելացումը կամ հարցաթերթիկում փոփոխությունները հիմնավորվում են գործիքի չաշխատելու կամ ինֆորմացիայի ոչ ամբողջական կամ սուբյեկտիվության բարձր ցուցանիշ ունենալու հանգամանքներով:

6. **Ամբիոնի փաստաթղթերի կազմում ՊԻԳԲ սկզբունքով**

ԳԿՄԿ Կրթության ՈԱ բաժնի կողմից կազմակերպվել են հանդիպումներ ԳԿՄԿ ամբիոնների վարիչների և որակի ապահովման պատասխանատուների հետ, քննարկվել են առկա խնդիրները ՊԻԳԲ սկզբունքի տեղայնացման վերաբերյալ:

7. ԳԿՄԿ մասնագիտական ամբիոններում դասավանդող դասախոսների դասահաճախումները վերահսկելու նպատակով ՈԱ բաժինը իրականացրել է մոնիթորինգ /մշտադիտարկում/: Արդյունքները ներկայացվել են ինչպես տնօրինությանը, այնպես էլ՝ համապատասխան ամբիոնների վարիչներին:
8. Հաշվետու տարում բաժինը պատրաստել և SS բաժնին տրամադրել է շուրջ 14 տեղեկատվական նյութ և 3 փաստաթուղթ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վեբկայքում տեղադրելու համար:

ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի պետ՝
Ն. Վարդանյան